ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 3 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գեւորգ Գյոզալյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գեւորգ Գյոզալյանը 2012թ. օգոստոսի 20-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27.1, 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ դատական օրենսգրքի 155 եւ 158-րդ հոդվածների դրույթները:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերի բովանդակությունից երեւում է, որ օրենսդիրը հնարավորություն է տվել Արդարադատության խորհրդին առանց որեւէ պատճառաբանության վերադարձնել անձանց դիմումները: Արդարադատության խորհրդի որեւէ գործողություն ենթակա չէ դատական վերահսկողության, անգամ այն դեպքում, երբ աշխատակիցը դիտավորյալ չի ընդունում դիմումը կամ ընդունելով անձանց դիմումները՝ միանձնյա որոշում է կայացնում վերադարձնել դրանք: Դիմողը գտնում է նաեւ, որ համաձայն վիճարկվող նորմերի եւ իրավակիրառական պրակտիկայի՝ Արդարադատության խորհրդի գործողությունները ենթակա չեն բողոքարկման, քանի որ վերջինս հանդես է գալիս որպես դատարան, եւ որ Արդարադատության խորհրդի գործողությունները ենթակա չեն վերահսկողության՝ ընդհանրապես եւ դատական վերահսկողության՝ մասնավորապես: Այս առումով, ըստ դիմողի, ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածն

այնքանով, որքանով չի սահմանում, որ Արդարադատության խորհրդի կողմից դիմումների պատասխանները պետք է լինեն պատճառաբանված, ինչպես նաեւ նույն օրենսգրքի 158-րդ հոդվածը, որն ընդհանրապես թույլ չի տալիս այդ մարմնի որեւէ գործողություն/ անգործություն դատական վերահսկողության առարկա դարձնել, հակասում է ՀՀ Սահմանադրության 27.1, 18 եւ 19-րդ հոդվածներին:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դատական կազմը գտնում է, որ հաշվի առնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ դիմումը ենթակա է քննության ընդունելու միայն մասնակի՝ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի եւ 158-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների մասով:

Քաղաքացի Սամվել Մնացականյանի դիմումի հիման վրա, որով, ի թիվս այլնի, բողոքարկվել է ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի սահմանադրականությունը, համապատասխան գործով սահմանադրական դատարանում նշանակված է դատաքննություն սույն թվականի հոկտեմբերի 23-ին: Ուստի սույն գործը կարող է միավորվել քաղաքացի Սամվել Մնացականյանի դիմումի հիման վրա վերը հիշատակված գործին եւ քննության առնվել նույն դատական նիստում:

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 155 եւ 158-րդ հոդվածների մյուս դրույթներին, ապա առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ նշված դրույթների մասով դիմումի քննությունը ենթակա է մերժման, քանի որ դրանք չեն կիրառվել դատարանների կողմից, ինչը հիմք է հանդիսանում դիմողին համարելու որպես ՀՀ դատական օրենսգրքի փվյալ դրույթների սահմանադրականությունը որոշելու հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավասություն չունեցող՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի եւ 69-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Քաղաքացի Գեւորգ Գյոզալյանի անհատական դիմումով գործը՝ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի եւ 158-րդ հոդվածի 1-ին մասով ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

3 սեպտեմբերի 2012թ.
ՍԴԴԿՈ /1-20